ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության փորձագետ Գոհար Սաթունցի

Ես՝ Գոհար Սաթունցս, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024թ.-ի հունվարի 9-ից (2024թ. հունվարի 9-ին կնքված Պայմանագրի համաձայն):

2024թ.-ի մայիսի 10-ից մինչև 2024թ. հուլիսի 9-ը ներառյալ, համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտում, ազդեցության քանակական գնահատականների ստացում, վարկառուի վարկունակության և ֆինանսական վիճակի գնահատում՝ մասնավորապես «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» կազմակերպության մասով, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ տեղեկանքների ներակայացում.
- «ՀՀ պետական բյուջեից վարկերի տրամադրման դեպքում իրականացվող վերլուծությունների արդյունքում տրամադրվող եզրակացության բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի վերջնական տարբերակի՝ հաստատման ներկայացում.
- «Բանկերի վերակառուցման մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանակում վերակառուցման հիմնադրամին պետական արտակարգ աջակցության տրամադրման ուղղությամբ մանրամասն ուսումնասիրության իրականացում, ինչպես նաև վերջինիս կապակցությամբ իրականացվող աշխատանքային քննարկումներին մասնակցություն, առաջարկների ներակայացում.
- ՀՀ 2025-2027 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում «Ֆիսկալ ռիսկերի վերլուծություն» բաժնում ընդգրկվող բյուջետային վարկերից բխող ֆիսկալ ռիսկերի մանրամասն վերլուծության իրականացում, ինչպես նաև

վերջինիս բարելավման ուղղությամբ առաջարկների ներկայացում, համագործակցում այլ ստորաբաժանումների հետ.

- «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումների և փոփոխությունների իրականացմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն.
- Այլ գերատեսչությունների կողմից ներկայացված նախագծերի, միջազգային կազմակերպություններից ստացված զեկույցների, քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի և ներկայացված առաջարկությունների ուսումնասիրություն և մասնագիտական դիրքորոշման ներկայացում:

Ֆիսկալ ռիսկերի կառավարման
վարչության փորձագետ՝ Գոհար Սաթունց